Հաստատված է ԼՂՀ հանրային ծառայությունները
և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի
2008թ. հուլիսի 25-ի թիվ 42Ն որոշմամբ

Բնական գազի մատակարարման
(Մատակարար-ոչ կենցաղային սպառում ունեցող Բաժանորդ)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 13-520/2

ք.Ստեփանակերտ *«27» օգոստոսի 2013թ.*

Մատակարարը՝ *«Արցախգազ» ՓԲԸ*, ի դեմս գործադիր տնօրեն *Սեյրան Արմենի Միքայելյանի*, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Բաժանորդը՝ ՀՀ դատախազությունը, ի դեմս ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավար Աշոտ Եսայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել բնական գազ *Ասկերանի զինվորական դատախազության վարչական շենքի* գազամատակարարման համար, իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել մատակարարված բնական գազի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի պարտավորությունները

2.1. Մատակարարի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ Հանձնաժողով) 2007 թվականի նոյեմբերի 27-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N12Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» (այսուհետև ԳՄՕԿ), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

2.2. Մատակարարը պարտավոր է.

ա) Բաժանորդին մատակարարել սույն պայմանագրի 3.1 կետում նշված ստանդարտին համապատասխանող որակի *հոտավետացված* բնական գազ.
(հոտավետացված կամ չհոտավետացված)

բ) կազմել և Բաժանորդին ներկայացնել մատակարարված գազի համար վճարման փաստաթղթերը.

գ) գազասպառման համակարգում վթարների և վթարային իրավիճակների դեպքերում Բաժանորդի ահազանգով հնարավոր կարճ ժամկետում դադարեցնել նրա գազամատակարարումը և վերսկսել այն՝ այդ մասին նախազգուշացնելով Բաժանորդին.

դ) գազամատակարարման ընդհատման, սահմանափակման կամ դադարեցման դեպքերում ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետներում նախապես զգուշացնել Բաժանորդին և այն վերականգնել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով.

ե) Բաժանորդի պահանջով 5-օրյա ժամկետում նրան պարզաբանել բնական գազի ծախսի ու արժեքի հաշվարկված մեծությունների ճշտությունը.

զ) Բաժանորդի պահանջով պայմանագրի լուծման կամ գազամատակարարման ժամանակավոր դադարեցման, կամ օրենքով սահմանված այլ դեպքերում դադարեցնել նրա գազամատակարարումը 2 աշխատանքային օրվա ընթացքում.

է) կատարել իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի պլանային ստուգաչափում՝ գործարանային փաստաթղթերով սահմանված պարբերականությամբ.

ը) չխոչընդոտել իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի կայան Բաժանորդի ներկայացուցիչների մուտքը՝ օպերատիվ տեղեկատվություն ստանալու, անհրաժեշտ հանգույցները կապարակնքելու, կապարակնիքների առկայությունը ստուգելու, գազի որակական հատկանիշները ստուգելու նպատակով գազի նմուշառման համար:

2.3. Բաժանորդը պարտավոր է.

ա) վճարել Մատակարարին մատակարարված գազի դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով.

բ) գազը և գազասպառման համակարգը չօգտագործել տեխնիկական պայմաններով, նախագծով և գազասարքավորումների տեխնիկական փաստաթղթերով (անձնագրերով) չնախատեսված նպատակներով ու պայմաններով.

գ) չխոչընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքն իր տարածք նրանց լիազորությունները հավաստող լուսանկարով ծառայողական վկայականը ներկայացնելու դեպքում անհրաժեշտ հանգույցները կապարակնքելու, կապարակնիքների առկայությունը, ինչպես նաև նախագծին և տեխնիկական պայմաններին գազասպառման համակարգի համապատասխանությունը ստուգելու նպատակով, իսկ խախտումների վերաբերյալ կասկածի դեպքում կասկածելի հանգամանքը պարզելու համար: Մատակարարի ներկայացուցիչների մուտքը Բաժանորդի տարածք կատարվում է փոխհամաձայնեցված կարգով.

դ) գազասպառման համակարգի վթարի, վթարային իրավիճակների, գազասպառման համակարգի անսարքության կամ գազի արտահոսք հայտնաբերելու դեպքերում անմիջապես ընդհատել գազի սպառումը, փակել գազասպառման համակարգի և բոլոր գազօգտագործող սարքավորումների փականները և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել գազասպառման համակարգի սարքինությունն ապահովելու համար.

ե) իր մասնագիտացված անձնակազմի կամ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնող անձի միջոցով նրա հետ կնքած պայմանագրի հիման վրա, ապահովել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկումը.

զ) կատարել իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի պլանային ստուգաչափում՝ գործարանային փաստաթղթերով սահմանված պարբերականությամբ.

է) պահպանել սույն պայմանագրով նախատեսված սպառման ռեժիմը՝ ներառյալ հայտարարագրված չափաքանակները, ապահովել գազասպառման համակարգի շահագործման անվտանգությունը, համակարգի և դրանում ներառված սարքերի ու սարքավորումների սարքինությունը:

3. Գազի որակը և ճնշումը առաքման կետում

3.1. Բաժանորդին մատակարարվող բնական գազի որակական ցուցանիշները պետք է համապատասխանեն «Բնական վառելանյութային գազեր արդյունաբերության և կոմունալ-կենցաղային նպատակների համար» ԳՈՍՏ 5542-87 ստանդարտով սահմանված պահանջներին: Գազի ստորին տեսակարար ջերմարարությունը (կալորիականությունը) չպետք է ցածր լինի 31.8 ՄՋ/խորանարդ մետր (7600 կկալ/խորանարդ մետր)-ից (Տելսիուսի 20 աստիճան ջերմաստիճանի և 101.325 կՊա կամ 1.033227 կգ/սմ^2 ճնշման պայմաններում):

3.2. Առաքման կետում գազի ճնշումը պետք է լինի՝ _____ կՊա

(հաշվառքի կայանի անվանումը) (նվազագույն ճնշումը) (առավելագույն ճնշումը)

պայմանով, որ Բաժանորդը պահպանում է սույն պայմանագրով սահմանված չափաքանակները (իրականացվում է լրացուցիչ գրավոր ձևով երկկողմանի համաձայնությամբ):

3.3. Մատակարարը պարտավոր է առաքման կետում ապահովել սույն պայմանագրով սահմանված գազի ճնշումը գազամատակարարումն սկսելուց անմիջապես հետո:

3.4. Սույն պայմանագրի 3.1 կետի պահանջները չբավարարող գազը համարվում է անպատշաճ որակի: Այդպիսի գազ մատակարարելու դեպքում Մատակարարը պարտավոր է անմիջապես Բաժանորդին տեղեկացնել մատակարարվող գազի փաստացի կալորիականության մասին:

3.5. Բաժանորդն իրավունք ունի չընդունել անպատշաճ որակի գազը: Եթե Բաժանորդն ամբողջությամբ կամ մասնակի ընդունում է անպատշաճ որակի գազը, ապա սպառված գազի դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է համաձայն սույն պայմանագրի 6.3 կետի:

4. Մատակարարվող գազի քանակը

4.1. Սույն պայմանագրով մատակարարվող գազի տարեկան քանակությունը կազմում է _____ խորանարդ մետր (Ցելսիուսի 20 աստիճան ջերմաստիճանի և 101.325 կՊա կամ 1.033227 կգ/սմ^2 ճնշման պայմաններում), որի բաշխումն ըստ ամիսների կատարվում է համաձայն Կողմերի հաստատած ժամանակացույցի:

4.2. Մատակարարվող գազի՝ սույն պայմանագրով սահմանված չափաքանակի փոփոխությունը կատարվում է կողմերի փոխհամաձայնությամբ: Բաժանորդը մատակարարվող գազի՝ սույն պայմանագրով սահմանված ամսական չափաքանակի փոփոխման վերաբերյալ առաջարկությունը մյուս կողմին ներկայացնում է գազամատակարարման ամսվանից առնվազն 10 օր առաջ:

4.3. Գազամատակարարման ընդհատումների թվի և տևողության հետ կապված հարցերը կարգավորվում են ԳՄՕԿ-ով սահմանված կարգով, եթե սույն պայմանագրով այլ բան նախատեսված չէ (չգերազանցելով ԳՄՕԿ-ով սահմանված ցուցանիշները):

5. Մատակարարված բնական գազի հաշվառումը

5.1. Հաշվարկային ժամանակաշրջան է համարվում մեկ ամիս (10 օրից ոչ պակաս):

5.2. Մատակարարված բնական գազի քանակը որոշվում է առևտրային հաշվառքի սարքի միջոցով՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում: Մատակարարի և Բաժանորդի պատասխանատու անձիք Հաշվարկային ամսվա համար ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում կազմում են երկկողմ ակտ՝ Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակի մասին: Այն դեպքում, երբ Բաժանորդը (Բաժանորդի պատասխանատու անձը) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով չի մասնակցում սույն կետում նշված ակտի կազմմանը, ապա Մատակարարը կարող է ակտը կազմել միակողմանի: Մատակարարի կողմից կազմված ակտը հիմք է հանդիսանում Բաժանորդին վճարման փաստաթուղթ ներկայացնելու համար:

5.3. Առևտրային հաշվառքի սարքերի պլանային և արտապլանային ստուգաչափումը կատարվում է ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:

5.4. Եթե տեղի է ունեցել գազի սպառման փոխհամաձայնեցված քանակության փոփոխություն, որի հետևանքով չափումը կատարվում է հաշվառքի սարքի նոմինալ թողունակության տիրույթից դուրս, ապա հաշվառքի կայանի սեփականատերը այդ մասին պաշտոնապես տեղյակ է պահում մյուս կողմին, և Բաժանորդը պարտավոր է կանոնակարգել իր սպառումը կամ՝

ա) մատակարարից պահանջել հաշվառքի սարքերի փոխարինում, վճարելով փոխարինման հետ կապված բոլոր ծախսերը, եթե հաշվառքի կայանի սեփականատերը Մատակարարն է.

բ) իր միջոցներով փոխարինել հաշվառքի սարքերը, եթե հաշվառքի կայանի սեփականատերը Բաժանորդն է:

Այն ժամանակահատվածում, երբ չափումը կատարվել է նշված տիրույթից դուրս, ապա սպառված գազի քանակությունը հաշվվում է համաձայն օբյեկտում տեղադրված չափիչ մեխանիզմների տեխնիկական անձնագրի պահանջներին:

Բարձր ճշտության հաշվառքի սարքերի կիրառման դեպքում չափման տիրույթի ստորին սահմանը (30% կամ 20%) կարող է փոխվել: Բոլոր դեպքերում չափման տիրույթի նոր ստորին սահման է համարվում այն կետը, որից ցածր չափման սխալանքը գերազանցում է համապատասխան հաշվառքի սարքի ստանդարտով սահմանված թույլատրելի սխալանքի մեծությունը:

5.5. Մատակարարված գազի որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները Մատակարարը հաղորդում է Բաժանորդին ամիսը մեկ անգամ պարբերականությամբ, իսկ յուրաքանչյուր ամսվա վերջին օրը կազմվում և Բաժանորդին է տրամադրվում գազի որակը բնութագրող փաստաթուղթ (կամ գազի որակի սերտիֆիկատ, եթե Մատակարարի չափումները վավերացվում են ստանդարտացման մարմինների կողմից):

5.6. Առևտրային հաշվառքի սարքի խախտումների կամ միտումնավոր խախտումների, դրանց տեղադրման կամ շահագործման նորմերի խախտումների կամ գազը հաշվառքի սարքի շրջանցմամբ օգտագործելու դեպքում մատակարարված գազի քանակը հաշվարկվում է ԳՄՕԿ-ով սահմանված կարգով, ինչպես նաև Բաժանորդը ենթարկվում է վարչական տույժի մինչև 50 հազ.

դրամի չափով, իսկ էական վնաս հասցնելու դեպքում՝ քրեական պատասխանատվության, համաձայն ԼՂՀ կառավարության թիվ 125 որ 11.07.2000թ. որոշման:

5.7. Հաշվառքի սարքի փոխարինման դեպքում կազմվում է երկկողմ ստորագրված ակտ և կցվում պայմանագրին:

6. Գազի սակագինը և վճարումների կարգը

6.1. Մատակարարվող գազի սակագինը սահմանում է Հանձնաժողովը (Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2010թ. մարտի 2-ի թիվ 9Ն և 2012թ. նոյեմբերի 29-ի թիվ 114Ն որոշումների):

6.2. Հանձնաժողովի կողմից բնական գազի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետում:

6.3. Հաշվարկային ժամանակաշրջանում մատակարարված գազի համար Մատակարարը սույն պայմանագրի 5.2 կետին համապատասխան կազմված ակտի հիման վրա Բաժանորդին ներկայացնում է վճարման փաստաթուղթ՝ հաշվարկային ժամանակաշրջանին հաջորդող ութ օրվա ընթացքում: Եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է մինչև 10 հազար խորանարդ մետր բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական մինչև 10 հազար խորանարդ մետր սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով, իսկ եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է 10 հազար խորանարդ մետր և ավելի բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարվում է 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով:

6.4. Բաժանորդը սույն պայմանագրի 5.2 կետին համապատասխան կազմված երկկողմ ակտի հիման վրա ներկայացված վճարման փաստաթղթով սպառված գազի դիմաց վճարում է Մատակարարի ներկայացրած բանկային հաշվեհամարին ոչ ուշ, քան վճարման փաստաթուղթը ներկայացնելու օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

6.5. Հաշվետու ամսվա սպառած գազի դիմաց Բաժանորդը վճարումները կատարում է մինչև հաջորդ ամսվա 25-ը:

6.6. Պայմանագրում սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում Մատակարարը գրավոր հիշեցնում է Բաժանորդին վճարումը կատարելու նրա պարտականության մասին և նախազգուշացնում վճարումը չկատարելու դեպքում գազամատակարարման սահմանափակման կամ դադարեցման մասին: Եթե նախազգուշացման պահից սկսած 3 օրվա ընթացքում Բաժանորդը վճարում չի կատարում, ապա Մատակարարն իրավունք ունի դադարեցնել կամ սահմանափակել գազամատակարարումը՝ դրանից անմիջապես առաջ այդ մասին զգուշացնելով Բաժանորդին:

6.7. Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին Մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո Մատակարարը պարտավոր է Բաժանորդի հետ համաձայնեցված կարգով վերսկսել գազամատակարարումը 36 ժամից ոչ ուշ: Գազամատակարարումը վերսկսելուց (սահմանափակումը վերացնելուց) առաջ Մատակարարն իրավունք ունի տեղում ստուգել վճարումը հաստատող փաստաթուղթը:

6.8. Մատակարարը կարող է չսահմանափակել կամ չդադարեցնել Բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս ներկայացրել է Մատակարարի համար ընդունելի պայմաններով վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմել է պարտքի մարման ժամանակացույց: Եթե Բաժանորդը պարտքը չի մարում ըստ ժամանակացույցի, ապա Մատակարարն իրավունք ունի դադարեցնել նրա գազամատակարարումը՝ նախազգուշացնելուց հետո 3-օրյա ժամկետում:

6.9. Վճարման փաստաթղթում սխալ հայտնաբերելու կամ վճարի հաշվարկի ճշտության մեջ կասկածելու դեպքում Կողմերը առաջնորդվում են ԳՄՕԿ-ով սահմանված ընթացակարգով:

6.10. Բաժանորդի դրամական պարտավորությունների կատարումը Կողմերի գրավոր համաձայնությամբ կարող է ապահովվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված եղանակներով:

7. Գազամատակարարման ընդհատման, սահմանափակման կամ դադարեցման պայմանները

7.1. Մատակարարը կարող է ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետներում և կարգով ժամանակավորապես ընդհատել, սահմանափակել կամ դադարեցնել Բաժանորդի գազամատակարարումը

ա) ֆորս մաժորի դեպքում, եթե անհրաժեշտ է արագ վերացնել ֆորս մաժորի ազդեցությունը կամ հետևանքները, ինչպես նաև վթարները կամ վթարային իրավիճակները վերացնելու կամ կանխելու համար անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու դեպքերում,

բ) գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու դեպքում՝ աշխատանքների կատարման ժամկետները համաձայնեցնելով Բաժանորդի հետ,

գ) հաշվառքի սարքի միտումնավոր խախտումներով գազի սպառման դեպքում,

դ) բաժանորդի կողմից հաշվառքի սարքի շրջանցմամբ գազի օգտագործման դեպքում,

ե) սույն պայմանագրով սահմանված ժամկետներում մատակարարված գազի համար չվճարելու դեպքում,

զ) օրենքով սահմանված այլ դեպքերում:

7.2. Մատակարարը պարտավոր է ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետներում և կարգով դադարեցնել կամ սահմանափակել գազամատակարարումը հետևյալ դեպքերում՝

ա) Բաժանորդի դիմումի համաձայն,

բ) գազասպառման համակարգի տեխնիկական կանոնակարգերով սահմանված տեխնիկական սպասարկում չկատարելու դեպքում,

գ) գազասպառման համակարգում կամ գազատարների պահպանման գոտիներում Բաժանորդի կողմից կատարված այնպիսի ինքնակամ փոփոխությունների դեպքում, որոնք մատակարարի գնահատմամբ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջությանը, կյանքին կամ գույքին,

դ) Բաժանորդի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի պլանային ստուգաչափում չկատարելու դեպքում,

ե) պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազոր պետական կառավարման մարմնի կարգագրի հիման վրա,

զ) օրենքով սահմանված այլ դեպքերում:

7.3. Գազամատակարարումը վերականգնվում է մատակարարման ընդհատման կամ դադարեցման պատճառները վերանցնելուց (վերանալուց) և գազամատակարարման վերականգնման մասին Բաժանորդին նախապես զգուշացնելուց հետո:

8. Ֆորս մաժորային իրավիճակներ

8.1. Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաև սաբոտաժային գործողությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, հասարակական անկարգությունները, գործադուլները, այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով գազամատակարարման ցանցի վթարները, Մատակարարից անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն գազի ներկրման ընդհատումներն ու սահմանափակումները, որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությունը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման հակառակ նրանց կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

8.2. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի 8.1 կետում նշված իրավիճակների մասին ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղեկացնել միմյանց նշելով դրանց վերացման հնարավոր ժամկետները:

8.3. Ֆորս մաժորի ավարտից հետո Կողմերը պարտավոր են անմիջապես ձեռնարկել միջոցներ իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

9. Կողմերի պատասխանատվությունը

9.1 Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

9.2 Սույն պայմանագրի 6.5 կետով սահմանված վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի պահանջել Բաժանորդից վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ժամանակին չվճարված գումարի 0.1 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 % -ը:

10. Վեճերի լուծումը

10.1.Պայմանագրի՝ առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև՝ բանակցությունների միջոցով, անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

10.2.Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

11. Այլ պայմաններ

11.1Մատակարարն իր վրա է վերցնում գազի ճնշման կարգավորիչ կետի, ինչպես նաև Բաժանորդին պատկանող գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքները՝ սկսած Մատակարարի գազահամակարգի միացման կետից մինչև Բաժանորդի գազի հաշվառման սարքը, յուրաքանչյուր գազի ճնշման կարգավորիչ կետի սպասարկման արժեքը 1 տարվա կտրվածքով կազմում է 60000 դրամ (մեկ ամսվա սպասարկման արժեքը՝ 5000 դրամ), իսկ կարգավորիչ կետի համար 30000 դրամ, յուրաքանչյուր գազատարի գծամետրի սպասարկման արժեքը 1 տարվա կտրվածքով 90 դրամ է: Մատակարարի կողմից ենթակա է մասնագիտացված սպասարկման՝ Բաժանորդին պատկանող ԳԵԿԿ և - գծամետր գազատար:

11.2 Բաժանորդին պատկանող 11.1 կետում նշված մասնագիտացված սպասարկման համար գազատարի վճարը մեկ տարվա կտրվածքով կկազմի - դրամ, իսկ ԳԵԿԿ համար կվճարի - դրամ, ընդհանուրը - դրամ:

11.3 Բաժանորդի սեփականությունը հանդիսացող, ինչպես նաև մատակարարին պատկանող, բայց Բաժանորդի տարածքում տեղադրված գազատարների և սարքավորումների անսարքության համար *մատակարարը* ոչ մի պատասխանատվություն չի կրում: Այդ գազատարների, սարքերի, սարքավորումների նորոգման, կարգավորման աշխատանքներն իրականացնում է Բաժանորդը իր սեփական միջոցներով:

12. Պայմանագրի գործողությունը

12.1Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և համարվում է շարունակելի:

12.2Մատակարարի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

12.3Հանձնաժողովի կողմից բնական գազի մատակարարման (Մատակարար- ոչ կենցաղային սպառում ունեցող Բաժանորդ) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում և համաձայն սույն պայմանագրի 12.2 կետի՝ ներկայացնել Հանձնաժողովի գրանցմանը:

12.4Սույն պայմանագիրը կարող է լուծվել.

ա) Կողմերի փոխհամաձայնությամբ,

բ) Բաժանորդի կողմից միակողմանի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով,

գ) Մատակարարի կողմից միակողմանի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

Մատակարար՝
«ԱՐՑԱԽԳԱԶ» ՓԲԸ
«ԱՇԻՄԲ» Ստեփանակերտի մասնաճյուղ
բանկի կոդ՝ 24770 հ/հ 00045800000
ՀՎՀՀ 90010189
Հասցե՝ ք. Ստեփանակերտ, Տ.Մնձի 44
Հեռ: 94-43-70
«Արցախգազ» ՓԲԸ գործադիր տնօրեն՝
Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Բաժանորդ՝
ՀՀ դատախազություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՎՀՀ 00041180081 ՀՀ ֆին.նախար.գործառ.վարչ.
հ/հ 02500034
հեռ. 51-15-55, 51-15-56
Աշխատակազմի ղեկավար՝
Ա.ԵՍԱՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 79

N 13-520/2 առ 27.08.2013թ. բնական գազի մատակարարման պայմանագրի

ք. Ստեփանակերտ *«28» հոկտեմբեր 2014թ.*

Մատակարարը՝ *«Արցախգազ» ՓԲԸ,* ի դեմս գործադիր տնօրեն *Սեյրան Արմենի Միքայելյանի,* որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Բաժանորդը՝ ՀՀ դատախազությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Համայակ Գալուստի Նավասարդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

«Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության վարկային պարտավորությունների վերածնակերպման գործառույթների իրականացման հետևանքով փոփոխություն է մտցվում վերոնշված պայմանագրի իրավաբանական հասցեում: Սպասարկվող «ԱՇԻԲ» բանկի փոխարեն նշվում է «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերության «Արցախգազ» ՓԲԸ-ի տվյալները՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ, բանկի կոդը՝ 11500 Հ/Հ 02223600100:

Մատակարար	Բաժանորդ
«ԱՐՑԱԽԳԱԶ» ՓԲԸ Հասցե՝ ք. Ստեփանակերտ, Տ.Մեծի նրբ. 28 ՀՎՀՀ 90010189 Հեռ: 94-43-70	ՀՀ դատախազություն, ք.Երևան, Կ.Սարգսյան 5, ՀՀ ֆին,նախ.աշխ.գործ.վարչ. Հ/Հ 900011180081, ՀՎՀՀ 02506634
«Արցախգազ» ՓԲԸ գործադիր տնօրեն՝	*Աշխատակազմի ղեկավար՝*
Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	Հ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ